Վերապատրաստող կազմակերպություն

«Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց » ՊՈԱԿ

Թեմա՝ Տերյանի քնարերգությունը

Կատարող՝ Նարինե Նորիկի Աբրահամյան

«Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց » ՊՈԱԿ

Հայոց լեզու և գրականություն

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

Գյումրի 2022թ.

Բովանդակություն

Ներածություն ……2

Գլուխ 1……3

Գլուխ 2……4

Գլուխ 3……8

Եզրակացություն. ……17

Օգտագործված գրականություն ……18

Ներածություն

Հայ գրականության բազմադարյան պատմության հարուստ շտեմանարանում Վահան Տերյան անունը երևույթ է։ Գրական ասպարեզ իջնելով 20-րդ դարի առաջին տասնամյակում նա հայտնվեց երկու դարին արանքում, իսկ 1908 թվ-ից, երբ լույս տեսավ Տերյանի «Մթնշաղի անուրջներ » ժողովածուն, սկսվեց արևելահայ պոեզիայի նոր շրջանը, գրական մթնոլորտն ամբողջովին բռնկվեց տերյանական տրամադրություններով։

Տերյանը հանդիսացավ այն կամրջակը, որը հայ դասականգրականությունը միացրեց նորագույն շրջանի գրականությանը։Տերյանը խոր հետք թողեց հայ պոեզիայի ընթացքի վրա, նա նոր խոսք ասաց, նոր ձևով ասաց։

Մեր ուսումնասիրության նպատակն է .

1. Երեխաները կթափանցեն գրողի հոգու գաղտնարանները ՝ բացահայտելու հուզական ու խոհական ներքին արյումից ծնված ստեղծագործությունները։
2. Կկարողանան ճիշտ վերլուծել գրողի բնության, սիրո թեմաներով գրված ստեղծագործությունները. կապել նրա կյանքին։
3. Կկարողանան հասկանալ ՝ ինչ է քնարական ստեղծագործությունը, քնարական հերոսը։

Գլուխ 1

Վահան Սուքիասի Տեր – Գրիգորյանը ծնվել է 1885 թ. Ջավախքի Գանձա գյուղում։Հայրը ՝ ուսումնասեր քահանան, բոլոր երեխաների տվել է բարձրագույն կրթություն և ուներ նվիրական ցանություն ամենակրտսերին ՝ Վանիկին ևս տալ բարձրագույն կրթություն։Փոքրիկ Վահանին գերել է հայրենի եզերքը։ Նա սիրել է մշուշով և երազներով պարուրված ծննդավայրը, միգասքող ու մանուշակագույն մայրամուտ։

Ոսկեհանդերձ եկար և միգասքող,

Տխուրաչյա աշուն, սիրած աշուն.

Տերևներիդ դանդաղ թափվող ոսկով,

Մետաքսներով քնքշաշրշյուն։

«Օ՜, Գանձայի չքնաղ երեկոներ։Դուք թոցրիք Վահանի հոգին բանաստեղծական և գերզգայական ոլորտները, դուք անմահացաք նրա տաղանդի կախարդանքով, դարձաք երգ ու հեքիաթ, մաքուր սփոփանք և բարձր արվեստ»։(Իսահակյան)

Գանձան չքնաղ գյուղ է ՝ թառած երկինք մխրճվող լեռնապատի լանջին։Թվում է ՝ երկիրն ու երկինքը այստեղ սահման չունեն։Գյուղից ՝ փոքր – ինչ հեռու ՝ բարձրության վրա, ծփում է լեգենդար լիճը ՝ Փարվանան։

Գլուխ 2

«Ես եղել եմ էն երկնքի մոտիկ լեռնադաշտում, ուր ծնվել է Տերյանը, և կարծես թե նա լիքն է էն մշուշային թախիծով ու քնքուշ երազով, որ բնորոշում են մեր տաղանդավոր բան – ի քնարը » (Թումանյան)

Տերյանը գրական ասպարեզ իջավ այն ժամանակ, երբ մտքերին տիրում էին հայ բանաստեղծական երկու հսկաները ՝ Ավ. Իսահակյանը և Հովհ. Թումանյանը։ Շլացուցիչ ու շուտանցիկ լուսարձակի նման չեղավ նոր բանաստեղծի երևալը, այլ ՝ ճշմարիտ ու մշտավառ մի աստղի հայտնություն, որ իսկույն գրավեց գեղապաշտ հասարակությանը։

Իր առաջին իսկ գրքույկով ՝ «Մթնշաղի անուրջներով» (1908) Տերյանը դարձավ գրական հասարակության ուշադրության կենտրոնական դեմքը և երիտասաչդության կուռքը։

Տերյանի մուտքը առաջինը ողջունեցին հենց նույն երկու մեծերը, երկուսն էլ կռահեցին նոր բանաստեղծի տաղանդը, նորարարական էությունը և ողջունեցին այդ մուտքը։

«Նոր բանաստեղծի երգերը շատ գեղեցիկ են և գրեթե մեր լիրիկայի մեջ բոլորովին նոր բանկ» Թումանյան։

«Նա մի նոր գույնով, մի նոր ձայնով երգեց և սերը, և հայրենիքը, և բնությունը։Նա թարմացրեց հայ պոեզիայի և նյութը, և լեզուն» Իսահակյան։

Տերյանի ստեղծագործության ամենասեղմ, ամենաճիշտ, ամենապարփակ բնութագիրը տվել է Իսահակյանը ՝ Տերյանի մեծ բարեկամը։

«Բյուրեղացած զգացումներ ՝ անթերի ձևերի մեջ։շ»։ Հայ գրականության մեջ դեռ ոչ ոք այնպես չէր պատկերացրել և երգել թախիծը, տխրությունը, մարդկային կյանիքից անբաժան այդ տրամադրությունը։Այսպիսի ,մեղմությամբ և քնքշությամբ, երազային հանդարտությամբ և գերագույն զգայնությամբ դեռ ոչ մի բանաստեղծ հայ նոր գրականության մեջ չէր հնչեցրել սրտի տրտմության լարը։Բանաստեղծի տխրությունը մի լուսավոր, կենսածարավ երանգ ունի, որ ազնվացնում և մաքրում է հոգին, հուսահատությունից մղում դեպի կյանք և գեղեցկություն։

Թվում է՝ առանց այդ տխրության մի լավ բան կպակասեր կյանքում։Արդար մի կյանքի կարոտ երջանիկ մի սիրո իղձ և մարդկային ներդաշնակ հասարակության մի ձգտում ծնում են Տերյանի թախիծն ու տխրությունը։

Երբեմն քնարական պատկերը թոթափում է երկրային պատկերը և դառնում «աննշմար, որպես քնքուշ մութի թև»։

«Տխրություն» բանաստեղծության պատկերները լույսի շողի պես թափանցիկ ու շլացուցիչ։

Տերյանի ստեղծագործական մոտիվները բազմազան են։ Չի կարելի ուշադրություն չդարձնել նրա հայրենասիրական մոտիվների վրա՝ «Երկիր Նաիրի» մարգարտաշարի վրա։ Այդ երգերը ոչ միայն Տերյանի ստեղծագործության ադամանդներից են, այլև ամբողջ հայ բանաստեղծության ամենամաքուր, ամենաազնիվ ներշնչանքներից։

Հայրենասիրական մոտիվները միահյուսված են մյուս մոտիվներին, բայց «Երկիր Նաիրի» շարքում դրանք բյուրեղացած են և հասած բարձրագույն կատարելության։ Տերյանը կախարդի պես կյանք տվեց ասորեստանյան բևեռագրերի մեջ քարացած «Նաիրի» բառին, որ այնուհետև դարձավ հին Հայաստանին հոմանիշ ամենաբանաստեղծական և մեծախորհուրդ բառը։Մեծն Թումանյանն ասում էր, թե ամեն մի բառը մի աշխարհ է։

«Նաիրի» վերակենդանացած բառը ճշմարիտ , որ մի ամբողջ աշխարհ է, մի ամբողջ պատմություն։

Տերյանի նաիրյան երգերում զարմանալի սեր և քնքշություն կա դեպի հայրենի բնաշխարհը, ցավ ու մորմոք գյուղաշխարհի խոնարհ ու ընկճված մարդկանց համար։

«Մեր խեղճ գյուղերը», «լացի նմանվող անխինդ երգերը», հայկական տխրության սովոր թուխ դեմքերը, ամեն ինչ բանաստեղծի սրտում ծնում են անսահման ցավ ու վիշտ։

Տերյանն իր «դառն ու անուշ հայրենիքը» սիրում է մի տարօրինակ սիրով, այդ երգերում չկա ոչ ողբ, ոչ հոխորտանք, ոչ քարոզ։

Անել վշտի մեջ տապակվող սեփական ժողովրդի պատկերը տրված է անհուն գորովով , նոր ու ինքնատիպ բնորոշումներով այնքան նրբորեն որ այդ երգերը դարձնում են արվեստի կատարելություն։

Մշուշի միջից, - տեսիլք դյութական
Բացվում է կրկին Նաիրին տրտում
Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան
Եվ այնքան ներում ո՞ր երկրի սրտում…
Ո՞րտեղ են քարերն այնքան վերամբարձ
Ձեռների նման պարզված երկնքին
Ո՞րտեղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ
Եվ զոհաբերումն այնպես խնդագին…
Ո՞րտեղ է խոցում այնպես չար ու խոր
Սիրտը մարդկային, դաշույնը քինոտ,
Ո՞րտեղ է հոգին այնպես վիրավոր
Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ…

Ահա, թե որտեղ է Տերյանի թախիծի և տխրության ակունքը։Նաիրյան երգերը մեծ մասամբ գրված են 15 – 16 եղերական տարիներին, երբ բանաստեղծի հոգին նախազգում որ այնուամենայնիվ «նոր օր է բացվելու ազգերի համար» և ոգևորության խոսքեր էր փնտրում ասելու հոգևավարքի մեջ գալարվող իր ժողովրդին։

Ի՞նչպես չսիրեմ երկիրն իմ կխլված
Պարզված վերստին սրերի սուր այր,
Ի՞նչպես չսիրեմ հեզությամբ լցված
Դու յոթնապատիկ խոցված տիրամայր…

1913թ. Տերյանը գրեց «Մի՞թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծությունը, որի մեջ խտացված են մտածող, տառապող հայի հոգեկան խռովքն ու տագնապը։Բանաստեղծն երգում է պայծառ Նաիրին, նրա բոցե վարդերը, արքայական լեզուն, տագնապում նրա վաղվա համար։

Ի՞նչ է սպասվում անհունորեն սիրելի երկիր Նաիրիին։Ահա մի հարց, որը ծանր տագնապ է ծնում Տերյանի հոգու մեջ։

Վիշտը խորանում «Հայրենիքում իմ արնաներկ» սոնետում։Սև գիշեր է իջել հայրենիքի գլխին։Այնուամենայնիվ ողբերգության մեջ Տերյանը ուժ է գտնում որոնելու կենսական ուղիներ։Հայ ժողովուրդը աղետներին կուլ չգնալու համար պետք է կազմակերպի իր

ազգային մշակույթը, դպրոցը, գրականությունը, լեզուն։Հայաստանի հոգևոր ուժերի զարգացումը կնպաստի նրա գալիքի ստեղծմանը։

«Տխրություն » բանաստեղծությունը և ողջ «Մթնշաղի անուրջները» ժողովածում բանաստեղծի հոգու խորությունից բխած երգեր են։

Տխրությունը գունատ աղջկա տեսիլով է մարմնավորվում։Նա գալիս է և տխրությամբ լցնում արձակ դաշտերի ամայությունը։Նա նման է քնքուշ մութի թևին, իրիկնաժամին թփերն օրորող թեթև հովին։Ողջ մթնոլորտը համակվում է ազնիվ տխրությամբ և գերող թախիծով։

«Աշնան մեղեդի » բանաստեղծությունը Տերյանի հուսալքված ու հիասթափված հոգու արտահայտությունն է։Անցել են կյանքի «աղմկահեր օրերը» , «ոսկե տեսիլները» և «անուրջների լույսը»։Եվ բանաստեղծի հոգում մշուշ է, «չկա արշալույս անձրև է ու անձրև»։Սակայն այդ հուսալքությունից և հիասթափությունից Տերյանը չի կորցնում իրեն, իր հավատը դեպի երջանիկ ապագան։

«Աշունը միշտ թախիծ է բերում… Դրա մեջ ինչ – որ առանձնահատուկ գեղեցկություն կա, ինչ – որ տարօրինակ հմայք, ասես սեփական հոգու լացը լինի»։

Աշունը շատ հաճախ բանաստեղծի հոգու մեջ խառնվում է որպես հոգու մեղեդի։Աշուն է։Ամենուր անձրևում է միգապատ երկիքը։Բնության այս պահը հոգեհարազատ է Տերյանի հիվանդ հոգուն։

Գլուխ 3

Աշնան թախծալի երգը բանաստեղծի սրտի երգն է։ Քնարական հերոսը սիրում է աշխարհը, բայց կյանքի ամեն մի հատված հետք է թողնում նրբազգաց հոգու վրա։Մերթ հերոսը ձուլվում է աշնան ու իրիկվա գույներին, մերթ էլ խոր ցավով բողոքում մութ աշխարհի դեմ, ուր մարել են նրա հոգու լույսերը։

Ոսկե տեսիլնե՛ր, անուրջների լո՛ւյս…

Ես ցուրտ մշուշում իմ հոգու համար չկա արշալույս,

Անձրև է, աշուն։

1917 թ. «Մթնշաղի անուրջներ» - ի տպագրությունից մոտ 10 տարի անց Թումանյանը տվել է այդ գրքի գրական պատմական նշանակությունը և գնահատականը։ «Այդ գրքով սկսվեց արևելահայ բանաստեղծության երրորդ նորագույն շրջանը » (1857)

«Տերյանը իր հայտնությամբ գլխավորեց մեր լիրիկան, նա մշտապես մնում է կատար, լեռ - բարձունք»(Իսահակյան)

«Մթնշաղի անուրջներ» գրքում տեղ գտան իրականությունից, մարդկանցից հեռանալու, մեկուսանալու, միայնության մեջ իր սերը, երազները, հուսախաբությունները երգելու մոտիվները։

Տերյանի տխրությունը և անձնական կյանքի, և սոցիալական իրականության, և սեփական ազգի կեցության պայմաններից ծնունդ առած տխրությունն է։

Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց.

Կարծես թե սիրո խոսք ասաց նիրհող դաշտերին,

Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց.

Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին։

Այդ սուրբ շշուկով էլ Տերյանի երգերը համակեցին գրական հասարակությանը, երիտասարդությանը, և ի վերջո ամբողջ մեր ժողովրդին։

Բանաստեղծի հոգին ծնում է երգը, ինչպես բնությունն է բխեցնում իր աղբյուրը։Ո՞վ գիտե որտեղ է սկիզբ առնում, ի՞նչ խորությունից, հողի և ապարի ինչպիսի՞ շերտերից է անցնում և ի՞նչ նյութերով է հարստանում այդ խոխոջուն աղբյուրը մինչև երկրի երեսին ցայտելը։Այդպես էլ երգը ։Ո՞վ գիտե ՝ ե՞րբ, ի՞նչ վշտից կամ ուրախությունից, ի՞նչ հիացումից ու ոգևորությունից է հյուսվում երգը բանաստեղծի ներաշխարհում մինչև լույս աշխարհ գալը։

Պոեզիան Տերյանի համար մի յուրօրինակ քնարական օրագիր է, ուր ամենայն անկեղծությամբ արտահայտվել են նրա կենսական տպավորությունները, նրա անմիջական արձագանքը իրականության երևույթներին։

Ժողովածույի շատ բանաստեղծություններում գծագրվում են քնարական հերոսի նվիրական իղձերն ու երազները ՝ կապված սիրո, երջանիկ հանդիպման, մի ուրիշ լիարժեք կյանքի հետ։

Շատ հաճախ այդ շքեղ անուրջները ծավալվում են «նրբակերտ մթնշաղի» լույսի ու մութի այն խորհրդավոր ձուլման ժամանակ, երբ «ամեն ինչ երազում թ հոգու հետ», երբ թվում է , «որ ողջ կյանքդ մի անսահման քաղցր նինջ»։Քնարական հերոսին կյանքը հաճախ թվում է մի «տխուր հովիտ հավիտյան լալու»։

Նրա հոգուն հարազատ են իրիկունն իր անտեսանելի զգվանքներով, երբ կարելի է «սուտ կյանքին խառնել երազանքը սուտ»։

Բայց այս տրամադրությունները Տերյանին չեն հանգեցնում սառն, անտարբեր վերաբերմունքի դեպի աշխարհն ու մարդը, որի մտորումների ու սպասումների վրա իշխում թ մի լուսավոր, մարդասիրական հայացք, լիարժեք կյանքի ու սիրո կարոտ։Այս լուսավոր թախիծն էլ Տերյանի պոեզիայի անսպառ հմայքներից մեկն է։

Երգեր հայրենիքի ճակատագրի մասին։10-ական թվականներին Տերյանի պոեզիայում ուժեղանում է հայրենիքի քաղաքական բախտի թեման։Դա կապված էր այն աղետալի

անցքերի հետ, որոնք ճակատագրական եղան մեր ժողովրդի կյանքում։Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում բանաստեղծը հոգեպես ավելի խորն էր կապվում հայրենիքի հետ։Բազմաթիվ երգերում և մասնավորապես ***«Երկիր Նաիրի»*** շարքում Տերյանն ստեղծում է մի ուրույն փիլիսոփայություն Հայաստանի հոգևոր հարստության, անցյալի, ներկայի և գալիքի մասին;

«Որպես Լաերտի որդին…»։ «Երկիր Նաիրի» շարքը բացող այս բանաստեղծության մեջ Տերյանը կատարում է մի խորունկ և իմաստուն զուգահեռ՝ օտարության մեջ տառապող հայ բանաստեղծի և Հոմերոսի «Ոդիսականի» հերոսի միջև՝ իրեն նմանեցնելով Լաերտի որդի Ուլիսին (Ոդիսևսին)։

Որպես Լաերտի որդին, որպես
Ուլիս մի՝ թողած հող և տուն՝
Անցած ծովեր և ցամաքներ ես՝
Ամեն տեղ օտար և անխնդում։

Ոդիսևսի նման՝ նա գիտակցաբար հրաժարվում է օտար սիրենների «անուշ նվագներից», գայթակղիչ կանչերից ու իրեն առաջարկվող վայելքներից։Ինչպես Հոմերոսի հերոսն է արկածներով, դժվարություններ հաղթահարելով որոնում տունդարձի ճամփան և ձգտում օր առաջ հասնել հայրենի քաղաք և տուն, այնպես էլ ցուրտ հեռուներում անխնդում բախտ որոնող բանաստեղծն է երազում հայրենի մեղմ երգերը և ի վերջո գտնում հույսի արահետը, վերադառնում հայրենի հող.

Ու կարոտակեզ ահա կրկին
Վերադառնում եմ, որ առհավետ
Ունկնդիր լինեմ քո հին երգին
Եվ լամ, լամ անուշ քո երգի հետ …

Տերյանն ապրում էր հյուսիսում, ցուրտ հեռուներում, ուստիև ծանր օրերին նրան անսահման սիրելի են դառնում հայրենի հիշատակները։Անցյալի պատկերները , մոր սրբազան դեմքը և հայրենի հողն անհուն կարոտ են ամբարում բանաստեղծ որդու հոգում։

Նայիր, մեր սարերը ճերմակ –
Ձյո՛ւն է , ձյո՛ւն է ծաղկում …
Օ՜, սիրտ իմ, օտար երկնի տակ
Մեռնում եմ անտուն ու անքուն…

Երկիր Նաիրին տրորվում է օտարների կրկնկի տակ , արյունով է ներկվում բազմադարյան հողը , բայց այս ողբերգության մեջ անգամ բանաստեղծը ուժ է գտնում որոնելու կենսական ուղիներ։

1913 թ. Տերյանը գրում է **«Մի՞թե վերջին պոետն եմ ես…»** բանաստեղծությունը, որի տողերում խտացված են մտածող, տառապող հայերի հոգեկան խռովքն ու տագնապը։Հեռուներում թախծող բանաստեղծը երգում է իր պայծառ Նաիրին, նրա բոցե վարդերը , աղոթքի պես հնչող արքայական լեզուն, տագնապում է նրա ճակատագրի ու վաղվա համար։Որդիական սերը հասնում է արտասվոր քնքշանքի, պարուրվում լուսեղեն երազով.

Վտարանդի երկրում աղոտ,
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է որպես աղոթք
Արքայական քո լեզուն։

Ի՞նչ է սպասվում անհունորեն սիրելի Նաիրի երկրին,- ահա մի ծանր հարց, որը տագնապ է ծնում բանաստեղծ որդու մեջ։Մի ներքին ուժով բանաստեղծը կանխատեսում է գալիք ծանր աղետներն ու ողբերգությունը։Եվ բանաստեղծությունը հնչում է որպես մահվան տագնապալի ահազանգ.

Ահով ահա կանչում եմ քեզ՝
Ցոլա՛, ցնորք Նաիրի,-
Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի…

1915-16 թթ.՝ Մեծ Եղեռնի տարիներին, Տերյանը գրում է ցնցող բանաստեղծություններ, երգում յոթնապատիկ խոցված տրտում երկիրը, հազարամյակների խորքից եկած, դաժան ու խավար աշխարհում անարգված,

ուղեմոլոր , անհույս ու վիրավոր ժողովրդի ծանրագույն վիշտը, որը խոր ընդհանրացում է դարձել **«Մենք բոլորս, բոլորս մանուկներ ենք որբ…,», «Հայրենիքում իմ արնաներկ»** և այլ բանաստեղծություններում:

«Իջնում է գիշերը անգութ ու մթին …»:Տերյանի երգերը թեև տոգորված են խորը ու անփարատելիցավով, բայց հեռու են լալկանությունից:Իր ողբերգականորեն վեհ երգերին նա տալիս է հպարտ շեշտեր, ծանրագույն ողբերգության մեջ հույսով ու հավատով նայում գալիքին.

Իջնում է գիշերն անգութ ու մթին
Եվ այգը բացվում դառն ու մահահոտ,
Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին:

Դարավոր մաքառումների ճանապարհին հայ ժողովուրդը բոլոր չարիքներին դիմագրավել է ոգու ուժով:Ո՛չ տարերային աղետները, ո՛չ բարբարոս ցեղերի հարձակումները, ո՛չ պարբերական կոտորածները ու տեղահանությունները չեն ընկճել նրա ամրակուռ ոգին:Դարերի ժառանգ նաիրցուն չեն սարսափեցնում չար բոթերն ու գուժկան գիշերները, ոչինչ չի կարող այդ *«անդուլ ուխտավորին»* շեղել իր հավերժության երթից:Համառ կամքով նա հաղթահարելու է բոլոր դժվարություններն ու նպատակասլաց վերելքով շարունակելու է իր սուրբ ուղին.

Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
Մի հեգ նաիրցի՝ գնում եմ անկանգ.-
Թող գուժկան գիշերն անհաստատ դավե –

Որքան մութը սև՝ ես այնքան համառ,
Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակդ վեհ…

«Երկիր Նաիրի» շարքի ոգոգրեթե բոլոր բանաստեղծություններում Տերյանն ընդգծում է Նաիրյան ոգու ամրությունը՝ որպես հազարամյակներին դիմակայող գործոն , որպես մեր ժողովրդի տոկունության և հարատևման հիմք:Կործանվել են Հայաստանի երբեմնի հզոր ախոյաններ Բաբելոնն ու Ասորիքը, իսկ Հայաստանը հարատևում է

հենց հոգու ամրության շնորհիվ։ *«Ամրակուռ է մեր ոգին՝ դարերի զավակ»,-* բանաձևել է բանաստեղծը։Նոր ժամանակներում էլ թշնամական ծանր ու կործանարար հարվածները, ավելի չար բոթերը չեն կարող սասանել մեր ժողովրդի հոգեկան զորությունը և ապրելու, հարատևելու բնական տենչը.

Ժա՛մ է, ե՛լ նորից, իմ ծիրանավառ,
Զրահավորվի՛ր խանդով խնդագին.
Վառի՛ր երկունքի գիշերում խավար՝
Հրով մկրտված Նաիրյան ոգին։

«Ինչպես չսիրեմ...»

Ողբերգության ծանր օրերին, Հայաստանի քաղաքական բախտի խոր ըմբռնումով, բանաստեղծն ապրելու, ստեղծագործելու և արիության խորհուրդն էր բերում իր ժողովրդին։

Ճակատագրի նվագները։ Ամբողջովին հայրենիքի գալիքով ապրող բանաստեղծն ուներ նաև իր անհատական մեծ դժբախտությունը, որը սահմանել էր նրան ճակատագիրը ։ Նա էլ Դուրյանի, Մեծարենցի, Պեշիկթաշյանի պես տառապում էր թոքախտով, որը երևան էր եկել 1915 թվականին։Ժամանակի հետ սպառվում էին ուժերը, Տերյանն ամեն օր զգում էր մահվան ծանր շունչը.

Գնում եմ ուղին իմ ծուռ
Եվ գիտեմ՝ դեպի կորուստ...
Նիշված է բախտըս վերուստ,
Եվ չրկա փրկության դուռ...

«Սրտակեզ կսկիծ մի հին ....»

Տերյանը խոր թախիծով երգում է իր կյանիք ուղին, որը եկել է *«բոց ու բորբոք»* նվիրաբերում մարդկանց։Այնինչ բախտը սարդի նման հյուսում է ոստայն , փակվում են հույսի ճամփաները, մահվան ձյունը կամաց-կամաց հեռացնում է այդ տառապած մարդուն , որբացած հոգուն, ծածկում նրա հյուղը։

Բազմաթիվ բանաստեղծությունների մեջ հատկապես առանձնանում է հազվագյուտ մի երգ՝ «Հրաժեշտի գազելը»։

«Հրաժեշտի գազելը» գրել է 1916 թ. վերջերին։1917 թ. հունվարին Տերյանը այն կարդացել է Երևանում՝ ընթերցողների հետ ունեցած հանդիպման երեկոյին;Ժամանակակիցները պատմում են, որ երբ Տերյանը կարդաց գազելը, կարծես մահվան չարաշուք ստվերը սավառնեց բոլորի վրայով, տխրությունը տարածվեց ողջ դահլիճում։Հիվանդ բանաստեղծը պայծառ թախիծով իր սիրտը բացում է աշխարհի դեմ և բաժանման խոսք ասում մարդկանց, բնությանը, բոլոր արարածներին.

Ամեն վարկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով.
Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս բարով։
Մնաք բարով ասում եմ ես, բոլոր մարդկանց չար ու բարի,
Տանջվող ու որբ ադամորդուն ասում եմ ես մնաս բարով։
Մնաք բարով, ասում եմ ես ընկերներիս մոտ ու հեռու,
Ոսոխներիս չար ու արթուն, ասում եմ ես մնաք բարով։
Երկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին լույս ոլորտում ասում եմ ես մնաք բարով։

Այս բանաստեղծությունը հարազատություն ունի Պետրոս Դուրյանի, Միսաք Մեծարենցի՝ մահվան տագնապալից նվագներին, ինչպես նաև Հ. թումանյանի փիլիսոփայական ընդհանրացումներին՝ տիեզերքի ճամփորդ մարդու մասին։Տերյանը ծանր ողբերգության մեջ անգամ պահպանում է մեծագույնը՝ սիրո ուժը։Տեղի է ունենում հոգեկան հզոր մի երևույթ *անհուն ցավը փոխակերպվում է անհուն սիրո,* որը տրտում շեշտի հետ ունի նաև ինչ-որ համամարդկային թանկ բան.

Ոսկոշղթա իմ հուշերին,իմ գիշերին, իմ փշերին,
Արտույտներին ոսկի արտում, ասում եմ ես մնաք բարով։
Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Մանուկների վառ – խլրտուն, ասում եմ ես մնաք բարով։
Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,
Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով։

Այս գազելը ՝ բյուրեղյա սիրով և նրբին ծավալումներով, կարող է ծնվել միայն հազար ցավ տեսած, կյանքի հմայքներին ու առեղծվածներին հասու, խորագիտակ, խորազգա մարդու հոգում։Թեև նա հաշտվել է անհրաժեշտի հետ, արդեն ապրում է դեպի անհայտը, մութ աշխարհը տանող ճամփի սարսափը, սակայն իր սիրով և հիշատակներով կապված է այս երկրի հետ. նա մի սրտառուչ իղձ ունի միայն ՝ հուշ և հիշատակ ունենալ մարդկանց մեջ, բարի հիշվել նրանց սրտում։Այս բանաստեղծությունը կարծես լույսի ակունք է , մեղմորեն շողում և պայծառություն է բերում մարդկանց, վեհացնող, ազնիվ թախիծով տոգորված մի երգ է, որը ողողում է աշխարհը լույսով, արևով, տրտում մի սիրով ՝ ծնված հոգու վերջին կրակի ցոլքերից ու ջերմությունից։Այդ երկը սիրելի է բոլորին, համաժողովրդական ու հավերժ, ինչպես Դուրյանի «Տրտունջքը»։Ավ. Իսահակյանը «Հրաժեշտի գազելը»համարել է «աննախադեպ գեղեցկություն։

Եզրակացություն

1970-80-ական թթ. կար այն մտայնությունը, որ հետզհետե զարգացող և դեպի դինամիկ մշակույթ ձգտող հասարակությունը կխորթանա Տերյանի պոեզիայից, սակայն նման դատողները մոռանում էին մի բան, որ ժամանակի հետ կարող են հնանալ գաղափարները, այլ ոչ մարդկային զգացումները:Տերյանի բանաստեղծություններն արտահայտում են բազում մարդկանց սրտի թրթիռը, սովորական մարդու ներքին հոգեբանությունը սիրահարված լինելու պահին, իսկ մարդիկ սիրահարվել են և Տերյանի ժամանակներում և դրանից առաջ, և հիմա՝ 21-րդ դարում, և հետագա դարերում ևս:Քանի դեռ մարդիկ ունակ են սիրել Տերյանի պոեզիան չի հնանալու:Անզուգական է նաև Տերյանի հայրենասիրությունը:Նրա ստեղծագործություններից կարծես կաթում են ցավը, թախիծը և տխուր-տխուր սերը։

Տերյանին անհնար է ընկալել ինչ – որ ժամանակի կետից, նա միատեսակ կընկալվին բոլոր ժամանակներում, որպես ցավի ու սիրո միախառնում թղթի վրա։

Օգտագործված գրականություն

1.Էդ. Ջրբաշյան - Բանաստեղծություններ լիակատար ժողովածու

Վահան Տերյանի պոեզիան

2.Էդ. Թոփչյան – Վահան Տերյանի պոեզիան

Վահան Տերյան , Երևան հայպետհրատ. 1945

3.Արսեն Տերտերյան – Վահան Տերյան։ Ցնորքի, ծարավի և հաշտության երգիչը

Թիֆլիս

4.Հայոց նոր գրականության պատմություն։19-20-րդ դ.դ. պրակ. Վ Տերյան։Երևանի համալսարանի հրատարակչություն։

5.Գևորգ Էմին – Տերյան անտիպ և անհայտ էջեր Երևան «Տիգրան Մեծ» 2011

6. Հայկական սովետական հանրագիտարան։